<<Հայոց եկեղեցու պատմություն>>

8-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ի՞նչ հայտնեց Գաբրիել հրեշտակը Զաքարիային. *(0.5 միավոր)*

1) որ նա վերցնի իր ընտանիքը, գնա Եգիպտոս և որոշ ժամանակ այնտեղ բնակվի
2) որ նա որդուն պետք է ընծայի տաճարին
3) որ նրա որդին կլինի այն Փրկիչը, որի մասին կանխատեսել են մարգարեները
4) որ նա շուտով պետք է որդի ունենա

2. Հիսուս Քրիստոսի աշակերտներից ո՞վ էր մաքսավոր. *(0.5 միավոր)*

1) Հակոբոսը
2) Մատթեոսը
3) Հովհաննեսը
4) Պետրոսը

3. Հայ Առաքելական եկեղեցու ո՞ր թեմն է կոչվում Հայրապետական. *(0.5 միավոր)*

1) Այրարատյան
2) Արցախի
3) Գուգարաց
4) Շիրակի

4. Հայոց ո՞ր կաթողիկոսի կարգադրությամբ է Հայոց եկեղեցու տոների մեջ ավելացել Վարագա Սուրբ խաչի տոնը. *(0.5 միավոր)*

1) Սահակ Պարթև
2) Հովսեփ Ա Հողոցմեցի
3) Ներսես Գ Տայեցի
4) Հովհաննես Ե Դրասխանակերտցի

5. **Ո՞ր ժողովում ընդունվեց «Երկու բնություն՝ մեկ անձ, անխառն, անշփոթ, անբաժանելի, անայլայլելի» բանաձևը.** *(0.5 միավոր)*

1) Նիկիայի
2) Կոստանդնուպոլսի
3) Եփեսոսի
4) Քաղկեդոնի

6. **Որտե՞ղ գումարվեց Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովը.** *(0,5 միավոր)*

1) Շահապիվանում
2) Աշտիշատում
3) Վաղարշապատում
4) Արտաշատում

7. **Ի՞նչ դիրք գրավեց Անանիա Մոկացի կաթողիկոսը բռնությամբ քաղկեդոնացված հայերի նկատմամբ.** *(0.5 միավոր)*

1) նրանց կրկին մկրտեց Հայոց եկեղեցու ծեսով
2) նրանց բնակեցրեց Վասպուրականում
3) նրանց մեկուսացրեց
4) նրանց վտարեց Հայաստանից

8. **Ո՞վ 1706 թ. Հուսեին շահից ստացավ Պարսկաստանում կաթոլիկ նոր միաբանությունների ստեղծումն արգելող հրովարտակ.** *(0.5 միավոր)*

1) Հակոբ Դ Ջուղայեցին
2) Աբրահամ Գ Կրետացին
3) Եղիազար Ա Այնթապեցին
4) Աղեքսանդր Ա Ջուղայեցին

№ 9-12
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. ---------- մարգարեն Ք.ա. 594 – 592 թվականներին խոսելով Երվանդունյաց Հայաստանի մասին, այն համարում է հզոր թագավորություն և հրեաներին խորհուրդ է տալիս Բաբելոնի դեմ մղվող պայքարում դաշնակցել հայերի հետ: *(1 միավոր)*

10. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարում է ---------- ---------- ժողովը, որին մասնակցում են Հայաստանի և Սփյուռքի հայկական համայնքների հոգևորական և աշխարհիկ պատգամավորները:
(1 միավոր)

11. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը Հայոց եկեղեցու տաղավար հինգ տոներից է և նշվում է ---------- մոտակա կիրակի օրը:
(1 միավոր)

12. Շուղրի Կարմիր վանքում գումարված ժողովի ժամանակ ընդունված նոր կարգի համաձայն, Հայոց կաթողիկոսի ընտրությունը պետք է կատարվեր Հայաստանի չորս՝ Բջնիի, Տաթևի, Հաղպատի և ---------- աթոռների համաձայնությամբ: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Խորհուրդների բովանդակությունը համապատասխանեցնել տրված խորհուրդների անվանումներին.

1. Մկրտություն
2. Ապաշխարություն
3. Կարգ հիվանդաց
4. Դրոշմ

ա. Պարգևում է Սուրբ Հոգու շնորհները և զորացնում է ընդդեմ փորձությունների:
բ. Օգնում է ազատվել մկրտությունից հետո գործած մեղքերից:
գ. Իբրև հոգևոր կերակուր, մարդու մեջ հասունացնում է առաքինություններն ու հոգևոր գիտակցությունը:
դ. Բժշկում է մարմնի տկարությունները՝ քավելով հիվանդության պատճառ հանդիսացող մեղքերը:
ե. Ազատում է ադամական մեղքից և դարձնում Քրիստոսի հետևորդ:

1	
2	
3	
4	

14. Ժողովրդական սովորությունները համապատասխանեցնել տոներին.

(1 միավոր)

1. Նախորդ օրը երեկոյան աղջիկները ծաղիկներ էին հավաքում, դրանցով ծածկում ջրով լի սափորը և այն թողնում դրսում:

2. Տոնի նախօրյակին՝ ուրբաթ երեկոյան, տների դռների մոտ կամ տանիքում փոխինդ էին դնում:

3. Եկեղեցուց տուն էին վերադառնում օրհնված ճյուղերով. դրանք պահում էին տանը, դնում ամբարների և կարասների մեջ, որ հիվանդությունները վերանան, տարին բերք ու բարիքով առատ լինի:

4. Երեկոյան ժամերգությունից հետո վառվող մոմերով վերադառնում էին տուն և եկեղեցուց տարած կրակով տների բակերում խարույկներ էին վառում:

ա) Սուրբ Սարգիս
բ) Տյառնընդառաջ
գ) Պայծառակերպություն
դ) Ծաղկազարդ
ե) Համբարձում

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռները դասավորել ըստ նրանց հիմնադրման հաջորդականության. *(1 միավոր)*

ա) Երուսաղեմի հայոց պատրիարքություն	1
բ) Սսի կաթողիկոսություն	2
գ) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն	3
դ) Աղթամարի կաթողիկոսություն	4
ե) Աղվանից կաթողիկոսություն	5

16. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության:

(1 միավոր)

ա. Ներսես Ա	1
բ. Վրթանես Ա	2
գ. Հուսիկ Ա	3
դ. Արիստակես Ա	4
ե. Սահակ Ա	5

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք հարցերին.

(2 միավոր)

<<Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիչներից, որովհետև սրա

ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների և օսմանցիների միջև, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից: Գերիներից ում էլ տեսնում էր, անպատճառ գնում էր ու ազատում:

Սա մնաց բարձրագահ աթոռի վրա՝ Ս. Էջմիածնում ուղիղ վարդապետությամբ, նորոգեց ավերակները նոր շինությամբ, պայծառացրեց միաբաններով ու վարդապետներով, պատշաճ ու հաստատուն ժամակարգությամբ, հարստացրեց եկեղեցական անոթներով, նյութական հարստությամբ>>:

1.Ո՞ր պատմիչն է մեջբերված հատվածի հեղինակը:

---

2. Ո՞ր կաթողիկոսի մասին է խոսքը:

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 2 ճիշտ պատասխանով

18. Նշել երկու ճիշտ պատասխան. *(0.5 X 2 = 1 միավոր)*

Թվարկվածներից ո՞ր երկուան են առաջնորդանիստ եկեղեցիներ.

1) Տաթևի Ս Պողոս-Պետրոս եկեղեցին
2) Էջմիածնի Ս.Աստվածածին եկեղեցին
3) Գորիսի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին
4) Կեչառիսի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին
5) Երևանի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին
6) Խոր Վիրապի Ս.Աստվածածին եկեղեցին

19. Տրված փաստարկներից ընտրել երկուսը, որոնք անհրաժեշտ պայման են հաղորդություն ստանալու համար. *(0.5 X 2 = 1 միավոր)*

1) լինել ձեռնադրված
2) լինել մկրտված
3) լինել պսակված
4) զղջալ և խոստովանել մեղքերը
5) մասնակցել երեկոյան ժամերգությանը

№ 20
Խնդիր-առաջադրանք (2 միավոր)

20. 908 թ. Գագիկ Արծրունին Վասպուրականում հիմնադրում է Արծրունյաց թագավորությունը: Նրա պատվերով Աղթամար կղզում Մանուել ճարտարապետը կառուցում է Ս.Խաչ եկեղեցին: 927 թ. Հովհ. Դրասխանակերտցի կաթողիկոսը կաթողիկոսական աթոռը փոխադրում է Աղթամար՝ Արծրունյաց թագավորության տարածք: 929 թ. Աբաս Բագրատունին, գալով իշխանության, իր նստավայր և երկրի մայրաքաղաք Կարսում կառուցում է Կաթողիկե եկեղեցի՝ նախապատրաստելով կաթողիկոսարանի տեղափոխությունն այնտեղ: 948 թ. կաթողիկոս Անանիա Մոկացին տեղափոխվում է նախ Կարս, ապա՝ Արգինա ավան:

Հարց:

1. **Հայտնե՛ք ձեր կարծիքը. ճի՞շտ վարվեց արդյոք Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ կաթողիկոսական աթոռը Դվինից Աղթամար տեղափոխելով:**
2. **Ինչո՞ւ էր Աբաս Բագրատունին ձգտում կաթողիկոսական աթոռը տեղափոխել Բագրատունյաց իշխանության տարածք:**
3. **Փաստարկներով հիմնավորե՛ք կաթողիկոսական աթոռի՝ Աղթամարից Արգինա փոխադրման անհրաժեշտությունը:**

№ 21

Շարադրանք (2 միավոր)

21. Ճի՞շտ վարվեց արդյոք կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին՝ չպաշտպանելով Հայաստանի ազատագրության ուղղությամբ Հովսեփ Էմինի, Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան վարդապետի և Մադրասի խմբակի ազատագրական ձեռնարկները: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը: